Ինչպես միանալ Թելեգրամ բոտին

Թելեգրամը հաղորդակցություն վարելու կիրառություն է, ինչպես օրինակ “Ֆեյսբուք մեսինջերը”, “Վայբերը” և այլն, որն աշխատում է սմարթ հեռախոսների (Android, Iphone, Windows Phone) և սովորական համակարգչների վրա (Windows PC, MAC, LINUX):

Այն հաղորդակցվում է ինտերնետի միջոցով https արձանագրությամբ :

Վեբ տարբերակի հասցեն է https://web.telegram.org

Համակարգչային տարբերակները հնարավոր է բեռնել հետևյալ կայքից՝ https://desktop.telegram.org



Սմարթ հեռախոսների համար անհրաժեշտ է բացել տվյալ հեռախոսի համար նախատեսված վիրտուալ խանութը (Play Store, App Store, Windows Phone Store), փնտրել **“telegram messenger”** բանալի բառերով և բեռնել այն: Այն ամբողջությամբ անվճար է:



Տեղադրելուց հետո անհրաժեշտ է գրանցվել՝ լրացնելով համապատասխան դաշտերը: Գրանցվելիս անհրաժեշտ է նշել հեռախոսահամարը, սպասել գրանցող համակարգի զանգին (պետք չէ պատասխանել) կամ ՍՄՍ հաղորդագրությանը:

1. Ինչպես միանալ ROADPOLICEbot -ին

Ճանապարհային ոստիկանության բոտին միանալու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

Բացել Թելեգրամի ծրագիրը՝



Search դաշտում մուտքագրել և փնտրել **ROADPOLICEbot** բանալի բառով՝



ROADPOLICEbot -ին միանալուց հետո, անհրաժեշտ է ծանոթանալ հայտարարության հետ և սեղմել **Start** և հետևել ծրագրի հրահանգներին՝

Նոր մեքենա գրանցելու համար սեղմեք “/Գրանցել նոր մեքենա” կոճակը



Մուտքագրեք մեքենայի համարանիշը 00xx000 ֆորմատով: Այնուհետև մուտքագրեք հաշվառման վկայականը



Զույգը (համարանիշ և տեխ. անձնագիր) ճիշտ մուտքագրելու դեպքում կստանաք հետևյալ հաղորդագրությունը



Սեղմեք “/Տեսնել իմ բոլոր մեքենաները” կոճակը, այնուհետև սեղմեք մեքենայի համարանիշի կոճակը





Իրավախախտումները տեսնելու համար սեղմեք “/Տեսնել իրավախախտումները” կոճակը



Ուշադրություն

ROADPOLICEbot համակարգում գրանցվելուց հետո պարտադիր չէ պարբերաբար ստուգել խախտումների առկայությունը, այն առցանց ավտոմատ Ձեզ տեղեկացումներ կուղարկի:
Ծրագիրն աշխատում է առցանց ինտերնետի միջոցով :
24 ժամից ավել ինտերնետ ցանցի հասանելիության բացակայության դեպքում ուղարկված հաղորդագրությունը /տեղեկատվությունը/ չի պահպանվում սերվերի վրա: Այս դեպքում կարող եք ստուգել կիրառելով Տեսնել իրավախախտումները հրահանգը: